

ՉԻԿԱՆՈ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածի նպատակն է քննարկել լեզու և բարբառ փոխհարաբերությունը՝ շեշտը դնելով ամերիկյան էթնիկ բարբառների, հատկապես «չիկանո անգլերենի» վրա: Հարկ է սկզբից ներկայացնել, թե ինչ է «չիկանո անգլերենը», քանի որ հայաստանյան լեզվագիտության մեջ այս թեմային անդրադարձ դեռևս չի եղել: Տարիներ առաջ շատերը հիմնականում բնիկ ամերիկացիները, «չիկանո անգլերենը» կրնութագրեին որպես լատինոամերիկացիներին՝ իսպանախոս ամերիկացիներին բնորոշ լեզու: Սակայն, ուսումնասիրելով այս լեզվական երևույթը, շատ լեզվաբաններ այն կարծիքի են, որ «չիկանոն» զուտ էթնիկ մեքսիկացիներին բնորոշ անգլերենի տարատեսակ է: Այստեղից էլ նրանք եզրակացնում են, որ ամերիկյան անգլերենի համատեքստում բարբառի նոր՝ էթնիկ տարատեսակ է ձևավորվել: Պետք է ասել, որ լեզվաբաններից քչերն են հակված ընդունելու վերոհիշյալ տեսակետը՝ կասկածի տակ առնելով «չիկանո անգլերենի»՝ անկախ բարբառի տարատեսակ լինելու փաստը: /Carmen Fought 2003/

Սույն հոդվածում մենք կփորձենք հիմնավորել «չիկանոյի» էթնիկ բարբառ լինելու փաստը՝ ներկայացնելով վերջինիս հնչյունական, քերականական, իմաստային առանձնահատկությունները և համեմատելով այն մեկ այլ՝ «Spanglish» կոչվող իսպանախոս բարբառի հետ: Էթնիկ բարբառների մասին քիչ թե շատ հստակ պատկերացում կազմելու համար նախ և առաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ լեզվական տարբերակների՝ բարբառների գոյության հարցին:

Լեզուն կենդանի օրգանիզմ է, որն աճելով և զարգանալով ի հայտ է բերում իմաստային, հնչյունական, շարահյուսական նոր կառուցվածքներ: Դրա պատճառով լեզվի հին՝ ընդունված նորմերի և նորահայտ կառույցների միջև հակասություններ են ծագում: Շատ դեպքերում իմաստային, քերականական և հնչյունական նոր կաղապարները դիտվում են որպես շեղում գրական նորմից՝ թերի և անընդունելի լեզվական տարբերակներ, իսկ շատ լեզվաբաններ լեզվի այս նոր դրսևորումները որակում են որպես բարբառի տարատեսակ: /Finigen1999/

Բարբառ և լեզու հարաբերակցությունը և տարբերակումը շատ լեզվաբանների խնդրո առարկան է դարձել: Առաջին հայացքից այսպիսի տարբերակումը իրենից այնքան էլ բարդ խնդիր չի ներկայացնում: Եթե զրուցակիցների միջև հաղորդակցությունը առանց որևէ արգելքների է տեղի ունենում, ապա

վերջիններս պատկանում են նույն լեզվական համայնքին: Իսկ եթե գրուցակիցների միջև հաջող հաղորդակցություն չի կայանում, այսինքն նրանք ի վիճակի չեն ընկալելու դիմացինի խոսքի հնչյունական, իմաստային և քերականական ձևակերպումը, ապա նրանց լեզուները տարբեր են. երբեմն լեզուն ընկալվում է որպես բարբառների ամբողջություն՝ բարբառներ, որոնք որևէ լեզվի ոչ գրական տարատեսակներն են և ունեն իրենց ուրույն հնչյունական, քերականական, իմաստային կառույցները: Յենց վերոհիշյալ ուրույն առանձնահատկություններն են, որ տարբերարկման հիմք են դառնում լեզու և բարբառ հարաբերակցության մեջ: Բարբառը կարելի է որակել որպես լեզվի մի տարատեսակ, որը շեղվում է ընդունված գրական նորմից՝ իր մեջ կրելով տվյալ լեզվի հնչյունական, քերականական և իմաստային ուրույն կառույցներ, սակայն չի խոչընդոտում տարվող հաղորդակցությանը նույն լեզվական համայնքին պատկանող, բայց տարբեր բարբառներով խոսող գրուցակիցների միջև:

Բարբառները կարող են արտահայտել այս կամ այն տարածքին, էթնիկ համայնքին, սոցիալական դասին, նույնիսկ սեռին բնորոշ նրբերանգներ, ըստ այդմ տարբերակվում են տարածքային, էթնիկ, սոցիալական, գենդերային բարբառներ:

Բարբառը կարելի է դիտել անհատի ինքնարտահայտման միջոց, որը հնարավորություն է տալիս ճանաչել նրա տարածքային, սոցիալական, էթնիկ պատկանելությունը: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ լեզուն հասարակության անբաժանելի մասն է և այն ոչ միայն զուտ հաղորդակցման գործառույթ է կատարում, այլև նաև մեծ դեր է խաղում անհատի սոցիալական, էթնիկ ծագման տարածքային պատկանելությունն ինքնորոշելու հարցում:

Իրավացի են այն լեզվաբանները, ովքեր նշում են, որ լեզու և բարբառ տարբերակումը բարդ հարց է: Յուրաքանչյուր բարբառ կարող է համարվել լեզու, քանզի այն ծառայում է որպես հաղորդակցման միջոց և, ի վերջո, անհանար է պատկերացնել առանց բարբառի լեզու: Ակնհայտ է, որ լեզուն՝ ինքնուրույն զարգացող մի համակարգ, ունի զարգացման իր սեփական տեմպերը: Եթե երկու տարբեր սոցիալական խմբեր իրարից հեռանում են, ապա այն լեզուն, որի կրողն են վերջիններս, զարգանում է տարբեր ուղղություններով: Խոսքային կառույցների օրեցօր աճող անդունդը դժվարացնում է հաղորդակցությունը վերոհիշյալ երկու խմբերի միջև և ահա նույն լեզվական ակունքից ծնվում են նոր լեզուներ: Ինչպես գիտենք, շատերի համոզմամբ, այս գործընթացն է պատճառ դարձել մախահնդեփրոպական լեզուների տարբեր լեզվաընտանիքների ստեղծմանը:

Բարբառի կարևորագույն հատկանիշներից մեկը մարդկանց միավորելու կամ տարանջատելու կարողությունն է: Նույն բարբառով խոսող մարդկանց խումբը միավորվում և ստեղծում է սոցիալական մի խմբավորում: Այն անհատ-

ները, որոնք անկարող են լիովին ըմբռնել և տիրապետել տվյալ բարբառային նրբություններին, չեն կարող դիտվել այդ սոցիալական խմբավորման լիարժեք անդամ: Այսպիսով, լեզու և բարբառ հարաբերակցությունը կրում է ոչ միայն լեզվական այլ նաև սոցիալական բնույթ: Սոցիալական և հոգեբանական գործոնները մեծ դեր են խաղում այս կամ այն խոսելաճոճ «բարբառ» «պիտակելու» հարցում: Անգամ գրական անգլերենը բաժանվում է մի քանի տարատեսակների: Այսպես, տարածքային հեռավորության արդյունքում առաջացել են «ամերիկյան» և «բրիտանական» անգլերենները, որոնք իրենց հերթին ձևավորել են սեփական բարբառների համակարգը: Քանի որ սույն հոդվածի խնդրո առարկան «ամերիկյան» անգլերենն է, մենք կամոդադառնանք դրա լեզվական տարբերակներին:

Ինչպես արդեն ասել ենք, լեզուն հասարակության անբաժանելի մասն է և կարող է որոշիչ դեր խաղալ այս կամ այն անհատի ինքնարտահայտման, սեփական անձը որոշակի սոցիալական խմբավորման դասելու հարցում: Անհրաժեշտաբար, յուրաքանչյուրի խոսքը կարող է դառնալ գործիք՝ բացահայտելու այն դերը, որ տվյալ անհատը ստանձնել է հասարակության համակարգում: Հասարակության մեջ առկա դասակարգումը ըստ սեռի, էթնիկ ծագման, մասնագիտության հանգեցնում է լեզվական համակարգի մմանատիպ դասակարգման:

Այս գործընթացի դրսևորումն են բարբառները, որոնք արտացոլում են հասարակության տարբեր խմբերի կողմից օգտագործվող խոսքային կաղապարները: Այստեղից էլ հետևում է, որ բարբառը կարող է համարվել լեզու-հասարակություն փոխհարաբերության արդյունք: Լաբովը առաջին լեզվաբանն էր, որն ուսումնասիրելով տարբեր մարդկանց խոսքը՝ կարողացավ ընդհանրություններ գտնել նույն սոցիալական խավին պատկանող անհատների միջև: Վերլուծելով տարբեր սոցիալական խավերին բնորոշ խոսքը՝ նա դասակարգում մտքրեց դրանց միջև. ըստ դրա, անհատները բաժանվում են չորս դասի. *ցածր խավ, աշխատավոր խավ, ցածր միջին խավ և բարձր միջին խավ* Խոսքը՝ որպես լեզվի անմիջական արտահայտման միջոց, կարող է տարբերակներ ունենալ, քանզի ինչպես անհատներն են տարբեր դերեր ստանձնում հասարակության մեջ, այնպես էլ նրանց խոսքն է իր մեջ կրում այդ դերին բնորոշ նրբերանգներ: Ինչպես արդեն նշել ենք, խոսքը ոչ թե սոսկ հաղորդակցման միջոց է, այլ անհատի ներքին հոգեկան աշխարհի արտացոլում. Լեզվի և անհատի միջև գոյություն ունեցող կապը անքակտելի է:

Վերջին ժամանակներս լեզվաբանները փաստում են, որ անհատի սեռային պատկանելությունը նույնպես կարող է որոշիչ դեր խաղալ որևէ խոսքային կաղապարի նախապատվություն տալու հարցում: Ուսումնասիրելով կանանց և տղամարդկանց լեզուն՝ նրանք գալիս են այն եզրակացության, որ

տարբերություններն այնքան աչքի զարնող են, որ արդեն կարելի է խոսել բարբառային երկու տեսակների մասին, որոնցից մեկը բնորոշ է իզական սեռի ներկայացուցիչներին, իսկ մյուսը՝ արական:

Լեզու և բարբառ հարաբերակցությունը քննարկելիս առանձին կարևորություն է ստանում անհատի էթնիկ ծագումը: Ամերիկյան անգլերենում հատկապես որոշիչ տեղ են գրավում այսպես կոչված էթնիկ բարբառները:

Աֆրոամերիկյան էթնիկ բարբառը (AAVE) հետզհետե մեծ ազդեցություն է ձեռք բերել ամերիկյան անգլերենում: Վերոհիշյալ համայնքին չպատկանող սպիտակամորթ ամերիկացիներին ավելի ու ավելի դժվար է տրվում հաղորդակցությունը ֆրոամերիկացիների հետ: Աֆրոամերիկացիների կողմից գործածվող լեզուն հայտնի է նաև «սև անգլերեն» կամ «սև բարբառ» անվանմամբ: Շատ լեզվաբաններ դիտում են ֆրոամերիկացիների լեզուն որպես անգլերենի մի տարբերակ, որի մեջ առկա են ֆրիկյան լեզուներին և մշակույթին բնորոշ տարրեր: 1973-ին առաջին անգամ կիրառվեց «էբոնիքս» (Ebonics) գիտաբառը: «էբոնիքս» ասելով՝ նկատի ունեն նույն «սև անգլերենը», որն իր մեջ կրում է ֆրիկյան լեզուներին բնորոշ քերականական և հնչյունական կառույցներ և ծառայում է որպես միակ հաղորդակցման միջոց այդ համայնքի ներկայացուցիչների միջև: Ուսումնասիրելով «սև անգլերենը»՝ շատ լեզվաբաններ եզրակացնում են, որ ոչ բնիկ լինելով՝ ֆրոամերիկացիները փորձել են ընկալել նոր լեզուն առանց հնից ձերբազատվելու: Այս հակասական գործընթացի արդյունքում ստեղծվում է նոր ֆրոամերիկյան էթնիկ բարբառ, որը ոչ միայն ծառայում է որպես հաղորդակցության միջոց, այլև նաև շատ ֆրոամերիկացիների կողմից ընկալվում է որպես էթնիկ ինքնությունը պահպանելու և արտահայտելու միջոց: /Neuliep 2006 /

Աֆրոամերիկյան անգլերենը միակ էթնիկ բարբառը չէ ամերիկյան անգլերենում: Սույն հոդվածում մենք արդեն հիշատակել ենք մեկ այլ՝ «չիկանո անգլերեն» կոչվող էթնիկ բարբառի մասին, որը բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել ամերիկյան բարբառագետների շրջանում: Պետք է ասել, որ նրանց մեծամասնությունը լատինոամերիկացիներին բնորոշ լեզուն ընկալում է որպես իսպաներենի և անգլերենի խառնուրդ: Խառնածին լեզվի նկարագիրը ամբողջացնելու նպատակով ստեղծվեց մի մի նոր գիտաբառ՝ «Spanglish»-ը: Ընդունված փաստ է, որ նույն հասարակական համակարգում երկու տարբեր լեզու կրողների համատեղ կյանքի հետևանքով առաջանում է այդ լեզուների յուրօրինակ հիբրիդ: Լատինոամերիկյան համայնքի ներկայացուցիչները սովորություն ունեն անգլերեն կառուցվածքները «իսպանականացնելու» և հակառակը՝ իսպաներենները «անգլերենացնելու», որի հետևանքով առաջանում է «Spanglish»-ը, որը իսպաներենի և անգլերենի միաձուլման արտացոլումն է: Գիտնականների կարծիքով «Spanglish»-ը համախմբում է էթնիկ լատինոամե-

րիկացիներին և նրանց հնարավորություն տալիս ինտեգրվելու ամերիկյան հասարակությանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անգամ «Spanglish»-ն ունի իր տարատեսակները: Այն գործածվում է լատինոամերիկյան համայնքի տարբեր ներկայացուցիչների կողմից, և այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ այդ տարատեսակները արտացոլում են այն բազմազանությունը, որը առկա է հասարակության տվյալ էթնիկ խավի ներսում: Բազմազանության վառ օրինակ կարող է համարվել կուբացիների և դոմինիկացիների լեզուն: Վերջիններս իրարից խիստ տարբերվում են այն առումով, որ կուբացիների «Spanglish»-ին կարելի է հանդիպել ամենուրեք՝ տանը, դպրոցում, մինչդեռ դոմինիկացիների մոտ այն օգտագործվում է որպես հաղորդակցման միջոց միմիայն հանցագործ շրջանակներում և իր մեջ կրում է հանցագործ աշխարհին բնորոշ տարրեր: «Spanglish»-ի առկայությունը հակասական կարծիքների առիթ է տվել բարբառագիտության մեջ:

Շատերը, մասնավորապես լատինոամերիկացիները, գտնում են, որ «Spanglish»-ը աղավաղված իսպաներեն է: Նրանց կարծիքով «Spanglish»-ը կարող է բնորոշվել որպես՝

- ❖ անգլերենից վերցված իմաստաբանական փոխառություններ
- ❖ անգլերենին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ
- ❖ նույն նախադասության մեջ և անգլերենի և իսպաներենի կիրառում
- ❖ քերականական շեղումներ իսպաներենի ստանդարտ նորմից

Քչերն են այն կարծիքի, որ «Spanglish»-ը էթնիկ բարբառ է: Այն համարվում է երկլեզվության փայլուն օրինակ, որը հնարավոր է դարձնում էթնիկ լատինոամերիկացիների և տեղի բնակչության շփումը: Ուսումնասիրելով «Spanglish»-ին բնորոշ լեզվական առանձնահատկությունները և ի մի բերելով այն բոլոր հակասական կարծիքները, որոնք հնչում են տվյալ լեզվական երևույթի նկատմամբ՝ կարելի է եզրակացնել, որ «Spanglish»-ը երկլեզվության ակնհայտ նմուշ է և չի կարող դիտվել որպես առանձին էթնիկ բարբառ ամերիկյան անգլերենի համատեքստում:

Դեռ ոչ վաղ անցյալում շատ մարդիկ, այդ թվում նաև լեզվաբանները, պատկերացում անգամ չունեին «չիկանո» կոչվող երևույթի մասին: Սույն լեզվական դրսևորումը միայն վերջերս է լեզվաբանների խնդրո առարկա դարձել և շարունակում է տարածայնությունների առիթ տալ: «Չիկանո» ասելով՝ մենք նկատի չունենք միայն անգլերենի որևէ կոնկրետ էթնիկ բարբառ: «Չիկանո» ընդգրկում է մի շարք լեզվական, սոցիալ-հոգեբանական գործոններ: Պետք է ասել, որ բարբառագիտության մեջ այս լեզվական տարբերակը երկար ժամանակ չէր համարվում որպես ամերիկյան անգլերենի ինքնուրույն, անկախ էթնիկ բարբառ: «Չիկանո անգլերենը» կարելի բնութագրել որպես անգլերենի մի

յուրահատուկ տեսակ, որը գործածվում է բացառապես էթնիկ մեքսիկացիների կողմից, և որի վրա մեծ ազդեցություն է թողել իսպաներենը: «Չիկանո անգլերենը» ամերիկյան անգլերենի ստանդարտ նորմից հեռանալու վառ օրինակ է, բանգի, ինչպես յուրաքանչյուր բարբառ, այն ունի իրեն բնորոշ հատկանիշները՝ իր սեփական հնչյունական, շարահյուսական, իմաստային կառույցները:

Այն լեզվաբանները, ովքեր կասկածի տակ են առնում «չիկանո անգլերենի»՝ որպես ինքնուրույն բարբառի տեսակ լինելու իրավունքը, բերում են հետևյալ փաստարկները. նրանք գտնում են, որ դա գուտ թերի անգլերենի տեսակ է, որն իր վրա կրում է իսպաներենի՝ որպես մայրենի լեզվի զգալի ազդեցություն: Սակայն ուսումնասիրելով ամերիկաբնակ մեքսիկացիների խոսքը՝ Ջոյս Փենֆիլդը և Ջեյքոբ Գալիսիա Օրնշտայնը գալիս են այն եզրահանգման, որ «չիկանո անգլերենն» ունի այնպիսի տարրեր, որոնք առանձնանում են իսպանախոս համայնքի մյուս բոլոր ներկայացուցիչների խոսքից, և որտեղ չի նկատվում իսպաներենի՝ որպես մայրենի լեզվի անմիջական ազդեցությունը: Նրանց կարծիքով «չիկանո անգլերենի» կարևորագույն առանձնահատկություններից է հնչյունական համակարգը իր բոլոր հայեցակետերով՝ հնչերանգ, առոգանություն, շեշտի տարբեր կիրառումներ խոսքում: Մի կողմից «չիկանո անգլերենի» առոգանությունն ունի իր յուրահատկությունները և անմիջական ուժեղ ազդեցություն չի կրում իսպաներենից, մյուս կողմից «չիկանոյի» հնչյունական համակարգը էապես տարբերվում է ամերիկյան մյուս բարբառներից: /Carmen Fought 2003/

Համեմատելով երկու էթնիկ բարբառները՝ աֆրոամերիկացիներին բնորոշ բարբառը և «չիկանոն», լեզվաբանները գտնում են, որ վերոհիշյալ երկու բարբառների տարբերությունները դրսևորվում են հիմնականում հնչյունական մակարդակում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շարահյուսական մակարդակում «սև անգլերենը» որոշ ազդեցություն է թողել «չիկանո անգլերենի» վրա, որը խոսում է փոքրամասնություն դիտվող երկու համայնքների սերտ սոցիալական կապերի մասին: Ներգաղթման արդյունքում մեքսիկացիները կազմել են ԱՄՆ-ի ամենամեծ էթնիկ փոքրամասնություններից մեկը: Ուսումնասիրելով տվյալ էթնիկ համայնքի ներկայացուցիչների լեզուն՝ հանրալեզվաբանները գտնում են, որ մեքսիկացիների խոսքը տարբերվում է բուն էթնիկ համայնքի ներսում: Մեքսիկացիների համայնքը տարասեռ, բազմազան բնույթ ունի, համապատասխանաբար նրանց լեզուն, որը հասարակության անդրադարձն է, բարդ և հակասական պատկեր ունի: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Չիկանո անգլերենը» նույնպես գեթ չի մնացել լեզու-հասարակություն փոխհարաբերության ազդեցությունից:

Ուսումնասիրելով արևելյան Լոս Անջելեսի բնակիչների խոսքը՝ հանրալեզվաբանները եկել են այն եզրահանգման, որ «չիկանո անգլերենը»

տարբեր սոցիալ-ամտեսական, հոգեբանական գործընթացների արդյունք է: Տվյալ եթնիկ համայնքի որևէ ներկայացուցչի խոսքը կախված է այն սոցիալական դիրքից, որ անհատը գրավում է տվյալ հասարակության մեջ: Հանրալեզվաբանները նկատել են նաև, որ որքան բարձր դիրք է գրավում մեքսիկական ծագում ունեցող ներկայացուցիչը, այնքան ավելի լավ է տիրապետում անգլերենին, իսկ երբեմն էլ լիովին մոռանում է իր մայրենի լեզուն: /Carmen Fought 2003 /

Իրականում, միայն սոցիալ-ամտեսական գործոնի պատճառով չէ, որ նվազում է երկլեզու խոսողների թիվը: Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ գիտնականները գտնում են, որ դրա պատճառներից մեկը կարող է լինել այն, որ այժմ ԱՄՆ-ում բնակվում է մեքսիկացի ներգաղթյալների երրորդ և չորրորդ սերունդը, և անգլերենը, որը գերիշխող լեզու է, հետզհետե թուլացնում է իսպաներենի դիրքերը: «Չիկանո անգլերենը» ամերիկյան բազմազգ հասարակությանը բնորոշ ակնհայտ հակասությունների արգասիք է:

Ինչպես արդեն ասել ենք, «չիկանոն» ավելին է, քան լեզուն, և ընկալվում է որպես եթնիկ ինքնություն արտահայտելու միջոց: Շատ մեքսիկացիներ տիրապետում են միայն անգլերենին, մյուսները երկլեզու են, սակայն «չիկանոն» օգնում է, որ նրանք չմոռանան իրենց եթնիկ ծագումը, մշակույթը:

«Չիկանո անգլերենի»՝ որպես ինքնուրույն եթնիկ բարբառի օգտին է խոսում նաև այն փաստը, որ շատ մեքսիկացիներ համարյա չեն տիրապետում իսպաներենին, սակայն նրանց խոսքը կրում է իսպաներենին բնորոշ որոշ տարրեր: Երիտասարդ «չիկանոներին» դժվար է հաղորդակցվել իսպաներենով: Ի վիճակի լինելով քիչ թե շատ ընկալել իսպաներեն խոսք՝ նրանց չի հաջողվում ներգրավվել ակտիվ հաղորդակության մեջ այն դեպքում, եթե շփումը իսպաներենով է: Իսպաներենի մոռացությունը բացատրվում է նաև այն փաստով, որ երկար ժամանակ լինելով ճնշված փոքրամասնություն՝ մեքսիկացիները անգլերենը համարել են ավելի հարգի և փորձել միանգամից ինտեգրվել ամերիկյան հասարակությանը: Ժամանակի ընթացքում մեքսիկացիների վերաբերմունքը դեպի մայրենի իսպաներենը փոխվել է, և այժմ շատ մեքսիկացիներ դիտում են «չիկանո անգլերենը» որպես իրենց եթնիկ աղբյուրներին վերադառնալու միջոց:

Ի պատասխան այն բոլոր հակասական հարցադրումներին, թե արդյո՞ք «չիկանո անգլերենը» ինքնուրույն բարբառի տեսակ է ամերիկյան անգլերենի համատեքստում, թե՞ ոչ, կուզենայինք ներկայացնել «չիկանո անգլերենին» բնորոշ մի քանի առանձնահատկություններ: Ինչպես արդեն նշվել է, ակնհայտ առանձնահատկություններ են նկատվում հնչյունական համակարգում: «Չիկանո անգլերենի» ամենացայտուն յուրահատկություններից է "t" և "j" հնչյունների փոխատեղումը օրինակ՝ «չիկանոները» "show" բառն արտա-

բերում են "chow", իսկ "check" բառը՝ "shek": Գիտնականներին չի հաջողվել բացատրել այս երևույթը, քանզի իսպաներենում "j" հնչյուն չկա, այս փոխատեղումը չի կարելի համարել որպես մայրենի լեզվից արված հնչյունական փոխառություն:

«Չիկանո անգլերենին» հատուկ առոգանությունը նույնպես կարող է օրինակ համարվել: «Չիկանո անգլերենի» առոգանությամբ խոսող մեքսիկացիների խոսքում նկատվում է իսպանական նրբերանգներ անգամ այն դեպքում, երբ շատ «չիկանոներ» բոլորովին չեն տիրապետում իսպաներենին և սահուն խոսում են անգլերեն:

Այսպիսով, մեր կատարած հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ «չիկանո անգլերենը» եթեիկ բարբառային տարբերակ է, որում առկա է մայրենի լեզվի ազդեցությունը: Միևնույն ժամանակ սույն բարբառը ձևավորել է սեփական լեզվական համակարգը, որն ունի միայն իրեն յուրահատուկ և իսպաներենին չառնչվող տարրեր: Սույն հոդվածում առկա բոլոր փաստերը խոսում են «չիկանո անգլերենի»՝ որպես առանձին բարբառային տարբերակի օգտին:

Bibliography

- Edward Finigen "Language. Its Structure and Use" 3rd edition Harcourt Brace college publishers Orlando, USA, 1999
- Carmen Fought "Chicano English in context" Palgrave Macmillan 2003
- James W. Neuliep "Intercultural Communication" 3rd edition Sage Publication 2006
- Jacob Ornstein – Galicia "The Range of Chicano English" Form and Function in Chicano English" Rowley: Newburey House Publishers 1984
- Joyce Penfield "Chicano English: An Ethnic Content Dialect. Varieties of English around the world, General series; Amsterdam; Philadelphia 1985